54. Մեծ գավթի հս նավի հս աե սյան կամարի վրա

ԺԳ դար

Հրատարակված է՝ Ջալ 24

1 Յանուն Ա֊յ, ես հայր Յովանէս եւ եղբարքս գրեցաք Ծառզարդարին ժամն
Սարգսի Վաչուտին որդոյն
2 զամէն եկեղեցիքս արդեամ(ը)ք դստերն իւրոյ Վանենէ։ Ով խափանէ
նզովս առցէ յԱ֊յ։

Սանոթություն.— *Այս արձանագրությունը № 2-ի փոխարեն փորագրել են մեծ գավիթը շինելու ժամանակ։*

Տարբերություններ.—1. Ջալ Վաչուտին կարդացել է՝ Վաչեուտին:
2. Վանենի (ուղղ. Վանենի) Ջալ կարդացել է՝ Վարնինի:

55. Մեծ գավթի հս նավի մյուս կամարի վրա

Հ ՈՀ Մ 1221

Հրատարակվում է առաջին անգամ

Ի թուս ՈՀ։ Ես Հասան եւ Վախախ։

Սանոթություն.— 1. Շարունակությունը չեն փորագրել։
Այդ նույն արձանագրությունը թվականով միասին փորագրել են մի քիչ ավելի ցածրում, թվականը մոռացած լինելու և կամ տեղերի պահանջով, որ գրերն ավելի լավ երևան։

56. Նախորդի տակին, կամարի վրա

Հ ՈՀ Մ 1221

Հրատարակված է՝ Ջալ 31—32, Ղրիմ 57, Վիմ 64

1 Թվ. ՈՀ։ Ես՝ Հասան եւ Վախախ ամուսին իմ, տվաք ի Սանահինս ի Ծա֊
դերոյն զՇատարևանք
2 ամեն շահով մին աւրավար հող։ Ես տր Յոհանես, միաբանքս տվաք յԵ֊
ռման խաչի զամէն եկեղեցիքս պատարագել։ Ո֊
3 վ խափանէ դատի յԱ֊յ։

Սանոթություն.— Շատարևանքը *Ծագեր գյուղի հանդամասերից մեկն է։*
Այս արձանագրությամբ Հասանն ու Վախախը Սանահնին են տվել մի օրավար հող Ծագեր գյուղի Շատարևանք հանդամասից և ոչ թե Շատարևանքն իր ամեն շահով և մի օրավար էլ հող ավելի։ Այս դեպքում անհրաժեշտ կլիներ նշել նաև այդ մի օրավար հողի որտեղ գտնվելը։

Տարբերություններ.— 1. Ջալ զՇատարևանք կարդացել է՝ շատարև:
2. Մին աւարավար հող Ջալ կարդացել է Ի (20) աւրավար հող, *մին բառի Մ գիրը նախորդ բառի Վ-ի հետ և Ն գիրը Ի-ի հետ միացած լինելու պատճառով չի նկատել, իսկ Ղրիմ կարդացել է՝ ԽԷ (47)* աւրավար հող:
3. Ղրիմ յերեման կարդացել է՝ նմա: